

616.9
F-12

ՀԱՄԱՌՈՏ

ԽՐԱՏՆԵՐ

1912թ

1912 № 1549

Հայկական թղթերի և թղթերի

Ա. Բարսեղյանի

Հրատարակության Կովկաս-
յան Բժշկական Ընկերու-
թեան Յանձնաժողովի խմբ-
ագրությունը
(1912 թ.)

Сочинение д-ра А. Н.

Бабаяна.

Издание под редакцією
комиссіи ИМПЕРАТОР-
СКАГО Кавказскаго Ме-
дицинскаго Общества.
(1912 г.)

ՀԱՄԱՌՈՑ ԽՐԱՏՆԵՐ
ԹԷ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՊԱՇՏՊԱ-
ՆՈՒԵԼ ԹՈՒՔԱԽՏԻՑ

№ I.



Краткое наставление как уберечься отъ леговаго

Թորախտը (բարակացալը) մարդկային ցեղի ամենա-
երկշ հիւանդութիւնն է. նա աւելի ժողովուրդ է կոտո-
րում, քան ժանտախտը, խոլերան և այլն. միայն թէ նա կա-
մաց-կամաց է հնձում մարդկանց կեանքը, այնպէս որ շատ
աչքի չէ ընկնում:

Թորախտից մեռնում է ամեն տարի մէկ միլիոն ժողո-
վուրդ եւրոպայում, իսկ միայն Ռուսաստանում՝ հինգ հարիւր
հազարից աւելի: Սմեն տեղ բարակացալը հասարակ ժողո-
վրդի ցաւ է համարւում. որովհետեւ նա տարածուած է մեծ
մասով այն մարդկանց մէջ, որոնք մարտը օդից և արեղա-
կից զուրկ են, ապրում են շատուրով, նեղուած, մութ և խո-
նաւ բնակարաններում, սննդարար կերակուր չունեն: Նրա
զոհն են դառնում արհեստավորներ և զործարանների բանուր-
ներ, որ աշխատում են ապականած օդում. աշակերտներ և
ուսուցիչներ, որ բիշ են բաց անել տալիս ուսումնարանի
պատահանները. փոշոտ զօրանոցների զինուորներ, բանտերի
խնդրի օդի մէջ տառապող կալանավորներ, երեխաներ, որ

616.9
2-12

շարունակում են հազալ կապտացաւից և կարմրուկից յետոյ: Բայց ամենից աւելի նոյն պայմաններում հիւանդանում է բարակացաւոտ դերզատոսների սերունդը:

Այս հիման վրայ նախկին ժամանակ թորախտը համարւում էր ժառանգական հիւանդութիւն, աղբատ՝ չքաւոր դասերին աւելի վիճակուած: Այդ պատճառով ոչ ոք չէր էլ համարձակուած մտածել թէ կարելի է դիմադրել թորախտի տարածմանը ժողովրդի մէջ: Միթէ դիւրին է վերցնել աշխարհիս երեսից աղբատու թիւնը, ով կարող է փոխել ժառանգականութեան օրէնքները. ուստի մնում էր մի բան, որ դեղորայք գտնեն դոնեա թորախտոտ հիւանդներին առողջացնելու: Հին ժամանակից դեղորայք փորձուած են, բայց մինչ օրս էլ հաստատ բուժող ճար դեռ չէ գտնուած: Այսպէս բարակացաւոր անխափան տարածւում էր դարերի ընթացքում... Մտկայի վերջին բսան երեսուն տարուայ մէջ գիտնականները պարզեցին, որ բանը ժառանգականութեան և միայն աղբատու թեան մէջ չէ. նորա գտան, որ թորախտի տարածուելու գլխաւոր պատճառը նորա ՎԱՐԱԿԻՉ (տարափոխիկ) լինելն է: Միևնոյն գիտնականները ճանաչեցին թորախտոտ հիւանդի ցաւազար անդամների և խուխի (բալլամի) մէջ ցաւի սկզբնապատճառը վարակիչ սաղմը, որ հասարակ աշրին անտեսանելի է, բայց խոշորացոյցի միջոցով շատ լաւ կարող է տեսնուել: Այդպիսի սաղմը, երբոր ընկնում է մեծ քանակութեամբ տկար վատառողջ մարդու, ասենք, կաշու վրայ, շատ շուտով աճեցնում է և դարգացնում է գնդիկներ (տուբերկուլներ), որոնք յետոյ յառաջ են բերում, օրինակ երեսի վրայ՝ սարսափելի խոցեր: Այս է ահա այն ցաւը, որ գիտութեան մէջ կոչւում է կաշու տուբերկուլոզ (լուպուս), հայերէն դայլերախք (դայլերախ):

Միևնոյն վարակիչ սաղմերը, երբ թափւում են բնականից թուլակազմ և վատոյժ մարդու թորերի մէջ, այնտեղ էլ յառաջ են բերում բազմաթիւ գնդիկներ (տուբերկուլներ) և սկզբում պատճառ են լինում չոր հազին: Այդ գնդիկները

թորերի մէջ հեազհեաէ կակղելով կազմում են փոքր ու մեծ խոցեր, որոնցից և առաջ է դալիս ամենքին յայտնի՝ ԱՐԵՆԱԹՈՒԹԻՒՆ և թարախանման խորխը: Այս է թորերի գնդախտ (տուբերկուլիոզ), որ կոչւում է հասարակօրէն ԹՈՒՔԱՏ կամ ԲԱՐԱԿԱՅԱՒ:

Այսպէս աւելի և աւելի ծանօթանալով թորախտի վարակիչ սաղմի — յատկութիւններին, գիտունները վերջապէս մի շատ միաթարական եղբակացութեան եկան, այն է որ կարելի է մաքառել թորախտի վարակման դէմ, ինչպէս որ մարդիկ մաքառում են միւս վարակիչ (տարափոխիկ ցաւերի դէմ):

Երկու եղանակ կայ դիմադրելու բոլոր վարակիչ ցաւերին, ինչպէս և թորախտին: Առաջին եղանակն այն է՝ որ ընդհանուր կամ հասարակաց առողջութիւնը պահելու համար միջոցներ գործ դրուեն: Այս նշանակում է, որ պէտք է ղաւտիարակել ամուր կազմուածք ունեցող առողջ զաւակներ: Ամուր կազմուածք ունեցող առողջ մարդկանց արիւնը հեշտ է յաղթում և ոչնչացնում մարմնի բոլոր մասերի մէջ իւր վրայ յարձակուող թնամիկներին, այսինքն թորախտի սաղմերին: Թուլակազմ մարդկանց արիւնն այդպիսի յաղթող զօրութիւն չունի:

Պէտք է ժողովրդի կազմուածքը թուլացնող արբեցողութեան դէմ ընկերութիւններ կազմել, թէյատներ հաստատել օգտակար դուարձութիւններով. պէտք է աղբատ դասի համար հիմնել տժանագին ճաշարաններ, ժողովրդական հացատներ (փոնքեր), տժանագին և առողջ բնակարաններ. պէտք է տալ ժողովրդին առողջարար ջուր: Այս ամենը տէրութեան, քաղաքների և համայնքների շնորհն է, թող ուրեմն նորա հոգան:

Երկրորդ եղանակն այն է, որ ամէն մէկը գիտենայ թէ մարմնից դուրս մտնել է վարակի բունը կամ ցաւի պատճառները և պէտք է աշխատի ոչնչացնել այդ վարակաւորները կամ հեռու մնալ նոցանից: Ահա այդ մասին և պէտք է խօսենք մենք ներքեր:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Ամենից առաջ հարկաւոր է խմանալ թէ թորախտը այն տեսակ վարակիչ ցաւերից է, որոնք կամաց կամաց են ներգործում, ինչպէս սիֆիլիսը (վատ ցաւ), բորոտութիւնը և այլն: Միայն թէ այդ ցաւը ժառանգաբար չառ սակաւ է անցնում մարդու. երեխաները վարակուել կարող են միայն աշխարհ գալուց յետոյ:

Բացի այս՝ լաւ գիտնալու է, որ թորախտը ԲՈԺԵԼԻ հիւանդութիւն է. նորանից կարելի է ազատուել մինչև անգամ առանց դեղեր գործ դնելու. միայն թէ դորա համար պէտք է որ հիւանդութիւնը չհնանայ: Հնացած թորախտն արդարև դժուար է բժշկել: Առաջին անգամից հէնց որ թորախտի համար կասկածն յայտնի է լինում, հարկաւոր է հիւանդին հեռացնել այն շրջանից, սրի մէջ վարակուել է և տանել մի առողջ տեղ ու տեղաւորել նրան այնպէս, որ օրուայ և գիշերուայ մեծ մասը նա կարողանայ շնչել մաքուր օդ, աւելի շատ սնունդ ստանայ և բժշկի հսկողութեան տակ գործ դնել նաև մի քանի նախազգուշութիւններ: Այդ նպատակի համար և ամէն տեղ հաստատուած են այժմ թորախտով հիւանդների համար յատուկ առողջարաններ (սանատորիա):

Հարկաւոր է նոյնպէս գիտենալ, որ թորախտով հիւանդին ինքն ըստ ինքեան վտանգաւոր չէ շրջապատողների համար թէ տանն և թէ հասարակութեան մէջ: 2^է որ բարեկարգ հիւանդանոցներում և բուժարաններում հարկաւոր թորախտոտ հիւանդներ չեն վարակում իրանց բժիշկներին և հիւանդապահ սպասաւորներին: Վարակուելու վտանգը գլխաւորապէս այն խուլիցն է, որ հիւանդի արդէն ապականուած թորեբից դուրս է գալիս: Այդպիսի խուլի կամ թուրի ամէն մի կաթիլն ունի իւր մէջ հազարաւոր սաղմեր: Նշանաւոր է այն, որ այդ սաղմերի վարակիչ գորութիւնը չի կորչում մի քանի ամիսների ընթացքում, մինչև անգամ եթէ խուրխը 200 ԱՆՆՅ ԵԻՍ:

Հէնց որ խորխը սկսում է ցամաքել, նա դառնում է

փոշի. երբ աւելում են յատակը կամ գորգերը (խալի, կապերտ) թափ են տալիս, այդ փոշին բարձրանում է օդի մէջ, ընկնում է մարդու թորեբը և վարակում է նոյա թորախտով: Այստեղից ահա պարզ է, որ հարկաւոր մինչև անգամ հազարաւոր մաքրասէր թորախտոտ հիւանդներ միասին ամենեկին այնպէս վտանգաւոր չեն շրջապատողների համար, ինչպէս մէկ անգոյշ հիւանդը, որ ամէն մի հազարու ժամանակ իւր խուլը թափում է գետնին, յատակին, գորգի վրայ, թաշկինակի մէջ. այդպիսի հիւանդը ոչ միայն վարակում է է շրջապատողներին, այլ վատացնում է իւր գրութիւնը, որովհետև նորա չորացած խուլի մանր փոշին յետոյ ընկնում է նաև նորա թորի առողջ մասերի մէջ և այնտեղ ցաւի նոր նոր բուն շինում:

Բոլոր այս ասածից դուրս են գալիս հետեւեալ

ամենակարեւոր կանոններ թորախտից պաշտպանուելու համար:

1. Ամէն մէկ հիւանդ, որ երկար հազում է, պէտք է իրեն համար սովորութիւն անէ ոչ մի ժամանակ չթքել գետնին, յատակին, գորգերի վրայ, թաշկինակների մէջ, այլ՝ թքել միմիայն այդ նպատակի համար նշանակուած ամանների մէջ (թքաման), որոնք պէտք է լցուած լինին ջրով, բայց ոչ երբէք աւազով կամ չոր թեփով, ինչպէս այդ սովոր են անել շատ տներում:

2. Տան մէջ իբրև թքաման կարող է լինել որ և է ամենահասարակ աման, թէկուզ կաւից շինած. կարելի է ընտրել դուրա համար մի թաս կամ բաժակ կամ ուրիշ այդպիսի աման, որի մէջ անպատճառ պէտք է գտնուի փոքր ինչ ջուր մի գդալ ածանաղին սկիպիդարի կամ բօրայի թթուի հետ



56198.66

խառնած: Ամառը թրամանները պէտք է ունենան խուփ ճան-
ճերին արգելելու համար, որովհետև ճանճերը խուփի վրայ
նստելով ապա տանում տարածում են վարակիչ ուղղման ուրիշ
տեղեր:

3. Երկար հազալուց հիւանդը պէտք է որ տանից դուրս
էլ իրեն հետ ունենայ գրպանի թրամաններ, ինչպէս են
տափակ գաւաթներ, լայն բերան ունեցող ապակէ անոթ
խցանով. հակառակ դէպքում ներելի է թքել թաշկինակի
մէջ, բայց տուն վերադառնալուն պէս այդպիսի թաշկինակը
պէտք է նետել եւ ջրի մէջ և ապա լուանալ:

4. Թրամանների մէջ հաւարուածը պէտք է թափել աղ-
բահան խողովակների կամ արտաբնոցների մէջ, որտեղ թո-
քախտի սաղմերն անշուշտ կոչնչանան. ամէն անգամ գործ
դնելուց առաջ թրամանները պէտք է դնել եփջրի մէջ և մա-
քուր ջրով լցնելուց յետոյ դնել զանազան տեղերում:

5. Որովհետև հիւանդութիւնը կարող է տարածուել
թոքախտաւորների թուքի և թամբ խուփի ցայտերով (կա-
թիլներով), ուստի ամէն մէկ երկար հազացող հիւանդ
պէտք է գործ դնէ յայտնի նախազգուշութիւններ, իբրև քաղա-
քավարութեան կանոն, ուրիշի հետ խօսելիս նորա երեսին
թուք չարձակելու (հազալիս երեսը շուռ տալ մի կողմ, բե-
րանին թաշկինակ դնել և այլն):

6. Այն սննեակներում, որոնց մէջ բնակում է թոքախ-
տաւորը, չպէտք է լինի ոչ վարագոյր, ոչ գորգ: Թող աղատ
ներս մտնի արևը ու լոյսը, որ ոչնչացնում են հիւանդաբեր
սաղմերին: Հիւանդի բնակարանի յատակները պէտք է լուա-
նալ, այլ ոչ թէ աւելել: Առհասարակ այդպիսի բնակարանների
աղբը (զիպիլը) երբէք պէտք չէ փողոցը կամ դարբասը թա-
փել, այլ ամենից լաւն է այրել:

7. Հիւանդները պէտք է իւրեանց սննեակում մեղանակ
բնեն. հարկաւոր ժամանակ, երբ հիւանդը կարօտ է մշտա-
կան խնամքի, կարելի է թողնել նորա մօտ և մէկին: Թո-
քախտաւորները պէտք է ցերեկը, որքան կարելի է երկար

ժամանակ, մնան դուրսը բաց օդի մէջ, պարկած կամ ման
գալով, ինչպէս որ նոցա կարողութեանն յարմար է: Նորա
ննջարանի լուսամուտները պէտք է զօր—գիշեր բաց լինեն,
գործ դնելով ի հարկէ վատ եղանակներին կամ սաստիկ բա-
մու ժամանակ յայտնի նախազգուշութիւններ:

8. Թոքախտաւորի հագուստը, սպիտակեղէնը և միւս
իրեզնեաները հիւանդի մահից յետոյ ծառաներին կամ աղքատ-
ներին քաշխելը մեղք է, որովհետև պատահել է, որ դորա-
նից թոքախտով վարակուել են աղքատ, բայց առողջ մար-
դիկ: Եթէ չբաւոր մարդու ավստսը գայ թոքախտաւորի հա-
գուստն ու սպիտակեղէնը այրել՝ այն ժամանակ պէտք է
գործ դնելուց առաջ գոնէ երկու ժամ եռցնել ջրի մէջ:

9. Այն սննեակը, որտեղ ապրում էր և մեռել է թո-
քախտաւորը, պէտք է 2—3 շաբաթ շարունակ քամուն տալ
և զօր—գիշեր բաց թողնել նորա դռներն ու պատուհանները:
Պատերն, առաստաղը և յատակը լուանալ կարբօլի ջրով (50/50),
ասպա նորից սպիտակացնել, և սորանից յետոյ միայն բնակել
այդպիսի սննեակի մէջ:

10. Խուփից զատ թոքախտի տարածուելու *երկրորդ*
վարակատեղին և պատճառը այն կենդանիներն են, որոնք
թոքախտով հիւանդ են, յատկապէս կովերն և խոզերն: Այն
գէպքում, երբ դուք համոզուած չէք, որ կաթ տուող կովն
առողջ չէ, կաթը գործածեցէք միայն լաւ եփ տալուց յետոյ:

11. Միևնույնը կարելի է ասել ընտանի կենդանիների
մասի համար. *թերի տապալկած մսի*, կամ հում մնացած խո-
րովածի գործածութիւնը *խորհուրդ տալու չէ*: Վերջին ժա-
մանակներս թոքախտաւորներին առաջարկում են ուտել և
խմել հում միս կամ մսի հիւթ: Աւելի լաւ և աւելի անվտանգ
է այսպիսի գէպքերում բացի լաւ խորոված մսից *մսի փոշին*,
որի պատրաստելը կալոյ է սովորեցնել հիւանդին ամէն մի
բժիշկ:

Այն երկիրներում, որտեղ լուրջ կերպով մաքառում են թորախտի դէմ և այդ ճանապարհով կարողացել են 20—30 տարուայ մէջ կիսով չափ պակասեցնել թորախտից մեռնողների թիւը, բոլոր վերոյիշեալ կանոնները տպում են առանձին թերթերի վերայ և կախում են աշրի ընկնող տեղերում, որպէս զի ժողովուրդը միշտ կտրգայ և հետեւի այդ կանոններին:

Մեզանում փոքր քաղաքների և գիւղերի մէջ թերթիկներ և գրքայկներ չատ քիչ են կարգում, այդ պատճառով անհրաժեշտ է, որ քաղաքներում ամէն մի կարգացող մարդ, իսկ գիւղերում քահանաները, մօլլաները, ուսուցիչները, գրագէտները, կպցնելով մեր այս թերթերը եկեղեցիների գաւիթներում, հրապարակների պատերին, որտեղ անգրագէտ ժողովուրդը հաւաքւում է՝ կարդան այս խրատները և բացատրեն ժողովրդին նոցա օգուտը: Այստեղ հարկաւոր է աշակցութիւն և ժողովրդական դպրոցի կողմից, որը կարող է սերունդից սերունդ մօռացնել տալ երեխաներին վատ սովորութիւնն, այն է ամէն մի հաղալիս թքել զանազան կողմ: Մէկ խօսքով պէտք է ամենքն էլ հաստատապէս աշխատեն, որ հազացողն ամաչէ և քաշուի իւր խուխը թափելու ուր որ պատահի այնպէս, ինչպէս այժմ քաղաքներում և շատ գիւղերում ամէն մարդ ամաչում է քիթը ձեռով խնչել և չունենալ դուրս համար թաշկինակ: Նշանակում է, որ այս քանը զառնայ ժողովրդին սովորութիւն:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДОВЕДИИ
Академии Наук
СССР



6726